ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«17» հոկտեմբերի 2025թ. N 182-Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի 1-ին հավելվածի 15-րդ կետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 8-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Գեոտեխնիկա (Գրունտագիտություն)» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 20 կրեդիտ:
2. Հաստատել «Գեոտեխնիկա (Գրունտագիտություն)» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10/17/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2025 թվականի հոկտեմբերի 17 **-ի N** 182**-Ա հրամանի**

«Գեոտեխնիկա (Գրունտագիտություն)» միջոցառման ժամանակացույց

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Դասախոսի անուն և ազգանուն	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Նոյեմբերի 12-ից դեկտեմբերի 11-ը (Շորեքշաբթի և հինգշաբթի օրերին)	14"30-16"30	«Գեոտեխնիկա (Գրունտագիտություն)» ***վերապատրաստման դասընթաց***	Սարգիս Հրաչիկի Հայրոյան ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և	ԵՊՀ, Ալեք Մանուկյան 1, 1-ին ուսումնական մասնաշենք	20 կրեդիտ	1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի, 3-րդ կարգի մասնագետ 5, 17, 25 մասնագիտություններ	80.000 ՀՀ դրամ

				ջրաերկրաբանության ամբիոնի պրոֆեսոր, երկրաբանական գիտությունների դոկտոր				